ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 047-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Շվեյցարիայի զարգացման գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության համայնքներում համավարակի հետևանքները մեղմելու նպատակով կայացրած դրամաշնորհային ծրագրին հավանություն տալու մասին

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻՆՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒ.ԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻ.ԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱ.ՐԱՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԵԼ.ՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐ.ՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎ.ՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՋ.ԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐ.ԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՍԱՀ.ԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆ.ԴՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐ.ՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐ.ՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 048-Ա

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՄԵՂՄԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՅԱՑՐԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության ֆինանսական օժանդակությամբ 2021 թվականի նոյեմբեր ամսին Հայաստանի Հանրապետության համայնքներում մեկնարկել է համավարակի հետևանքները մեղմելուն ուղղված դրամաշնորհային ծրագրի 2-րդ փուլը: Ծրագրի համաֆինանսավորումը ստանձնել է ԳՄՀԸ (Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիրը՝ ՀՀ ՏԿԵՆ (ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՇՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ) հետ համատեղ: Համայնքապետարանի կողմից ներկայացվել է ծրագիր՝«Դիլիջան համայնքում տաղավարների հիմնում՝ գյուղատնտեսական ապրանքների վաճառքի համար»: Տաղավարների կառուցումը հնարավորություն կտա գյուղատնտեսությամբ զբաղվողներին առանց միջնորդի իրենց արտադրանքը ներկայացնել և վաճառել բնակիչներին ու զբոսաշրջիկներին, ինչն էլ կխթանի փողոցային առևտրի վերացմանը: Ծրագրի իրականացման դեպքում էկոլոգիական վնաս չի պատճառվի, քանզի տաղավարները կկառուցվեն բնական փայտից: Իսկ կառավարումն ու տեխնիկական սպասարկումը կիրականացվի համայնքապետարանի ենթակառուցվածքների միջոցով: Դրամաշնորհ ստանալու հայտը ներկայացվել է և ստացել նախնական հաստատման:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 7.733.000 ՀՀ դրամ.
Հայտարարվող ֆինանսական միջոցները՝ 6.109.000 ՀՀ դրամ.
Համայնքի համաֆինանսավորման չափը՝ 1.624.000 ՀՀ դրամ, ինչը կազմում է ընդհանուր բյուջեի 21%-ը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հանձնություն տալ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից՝ համավարակի հետևանքները մեղմելուն ուղղված ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում ներկայացված «Դիլիջան համայնքում տաղավարների հիմնում՝ գյուղատնտեսական ապրանքների վաճառքի համար դրամաշնորհ ստանալու նպատակով ներկայացված ծրագրին:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՋԻՆՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒԼՈՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱՄԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆԹՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Բյուջե /օրինակելի ձև/

Եվրո. 1 եվրոն = 570 ՀՀ դրամի՝ առ 10/12/2021թ

Հ/Հ	Ծախսային հոդվածների / նկարագրություն	Չափի միավոր	Միավորի քանակ	Մեկ միավորի գումարը դրամով	Հաշվարկված արժեք	Ֆինանսավորման աղբյուրը			Ներդրման տեսակը		
						Դրամաշնորհ	Համաֆինանսավորում	բյուջետ մասնակիցներ	Ֆինանսական	Ոչնյութ	
I	*Մայրուղիներ տեսակներ՝ ասֆալտապատ, գրունտագիծեր, գաբիոնագամբարներ և այլն*										
1	Նախագծանախահաշվային	հատ	1	350000	350000		350000				Եթե գումարը հայցվում է դրամաշնորհից, ապա այն չի կարող գերազանցել դրամաշնորհից հայցվող ընդհանուր գումարի 15%-ը:
2					0						
3					0						
	Ընդամենը				350000	0	350000(116:	0	0	0	
II	*Վերանորոգում, գրանցագրքային ծախսեր, գրքակալման ծախսեր*										
1	Տրանսպորտային միջոց				0						Եթե գումարը հայցվում է դրամաշնորհից, ապա այն չի կարող գերազանցել դրամաշնորհից հայցվող ընդհանուր գումարի 10%-ը
2					0						
3					0						
	Ընդամենը				0	0	0	0	0	0	
III	*Սարքավորումներ, գրասեղաններ, գույք, հագուստ և այլ պարագաներ*										
1	Օֆիս մոնտաժային աշխատանքների	հատ	1	7383000	7383000	6109000	1274000				
2					0						
3					0						
	Ընդամենը				7383000	6109000	1274000	0	0	0	
IV	*Հենք, շինարարություններ*										
1					0						0
2					0						
3					0						
	Ընդամենը				0	0	0	0	0	0	
V	*Այլ ծախսեր և ծառայություններ*										
1											
2					0						
3					0						
	Ընդամենը				0	0	0	0	0	0	
	Ընդհանուրը			7733000	7733000	6109000	1624000	0	0	0	

Դիլիջան համայնքի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան

Համավարակի հետևանքները մեղմելուն ուղղված դրամաշնորհային հիմնադրամի հայտ

Հայտի հետ կապված բոլոր հարցերով դիմել Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Ներսիսյանին (բջջ հեռ. 02682 2585, dilijan1@yahoo.com)

1. Հայտատու համայնք/ համայնքներ	Դիլիջան համայնք
2. Ամսաթիվ	10/12/2021թ.
3. Ծրագրի անվանում	«Դիլիջան համայնքում տաղավարների հիմնում՝ գյուղատնտեսական ապրանքների վաճառքի համար»
4. Ծրագրի նկարագրություն	Դիլիջան համայնքում վերջին մարդահամարի տվյալներով բնակվում է 24.451 բնակիչ, որի մեջ ներառված են 6 գյուղական բնակավայրերը՝ Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, Հովք: Քաղաքային բնակչությունը ևս զբաղվում է գյուղատնտեսությամբ, դիցուկ՝ տնամերձ հողատարածքների մշակմամբ՝ լոբու , կարտոֆիլի, կաղամբի, լոլիկի, սոխի, սխտորի, վարուգի և այլ բանջարաբոստանային ապրանքների աճեցմամբ: Դիլիջանը համարվելով խոշորացված համայնք արդեն երկար տարիներ չի գործում գյուղատնտեսական մթերքների տոնավաճառ, առևտրի կետ և չկա համապատասխան վայր տաղավարներով, որտեղ հնարավոր կլիներ ցուցադրել և վաճառել գյուղական բնակավայրերի բնակիչների կողմից արտադրվող գյուղատնտեսական մթերքները: Գյուղական բնակավայրերի բնակչության եկամուտների գերակշռող մասը ստացվում է գյուղատնտեսական արտադրությունից և այդ ոլորտում վարձու աշխատանքից: Հետևաբար, այդ բնակավայրերում աղքատության մակարդակը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսության զարգացման վիճակով:

Գյուղմթերքների վաճառքը իրականացվում է առանձին խանութներում և կրպակներում, ինչպես նաև շրջիկ եղանակներով՝ անմիջապես ավտոմեքենաների վրայից:
Մյուս կողմից, տեղի ֆերմերները և հարևան համայնքների ֆերմերները շուկայի բացակայության պատճառով դժվարություններ են ունենում իրենց արտադրանքը վաճառելիս:

Քանի որ գյուղմթերքների տեղական արտադրողները իրենց արտադրածը անմիջապես վաճառելու հնարավորություն չունեն, ստիպված են դիմել վերավաճառողներին, ովքեր միավոր արտադրանքի իրացումից ավելի շատ եկամուտ են ստանում, քան արտադրողը, ինչի արդյունքում սպառողի համար գինը թանկանում է, իսկ արտադրողի համար էժանանում: Վերը նշված խնդիրները լուծելու համար համայնքապետարանը, հաշվի առնելով ֆերմերների արդարացի պահանջը, ցանկանում է կառուցել փոքրիկ շուկա փայտե տաղավարներով և մետաղական ծածկով, որպեսզի գյուղացիական տնտեսությունները կարողանան իրենց արտադրանքը վաճառել տեղի բնակիչներին և զբոսաշրջիկներին: Շուկան կառուցվելու է համայնքապետարանին պատկանող հողի վրա 30մ*7մ չափերով, քաղաքի կենտրոնում՝ 26 Կոմիսարներ փողոցին հարակից հատվածում և կառուցվելուց հետո կլինի համայնքապետարանի սեփականությունը: Տաղավարները կառուցելուց հետո, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսությունները հնարավորություն կունենան իրենց արտադրանքը ներկայացնել և վաճառել Դիլիջանի բնակիչներին և զբոսաշրջիկներին: Ինչը հնարավորություն կտա համայնքի բնակիչներին և 1 ամսվա համար համայնք այցելող 10000-ից ավելի զբոսաշրջիկներին առանց միջնորդի՝ անմիջապես գյուղացուց գնել թարմ մթերք, իսկ գյուղացին էլ սեփական արտադրանքն իրացնելու լավ հնարավորություն կստանա:

Դիլիջանը համարվելով զբոսաշրջային քաղաք, որտեղ յուրաքանչյուր տարի մարտ ամսից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում տեղի են ունենում բազմաթիվ փառատոներ՝ ինչպիսիք են ամենամյա «Արվեստների և Արհեստների» փառատոնը, որն արդեն 10 տարի է անց է կացվում Դիլիջանում, «Արվեստոտ օր Դիլիջանում» փառատոնը և նմանատիպ այլ փառատոներ, որտեղ հնարավորություն է ընձեռվում համայնքի բնակիչներին վաճառքի ներկայացնել ձեռագործ

	աշխատանքները՝ ինչպիսիք են ձեռագործ տիկնիկներ, գոբելեններ, կարպետներ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսված է ժամանակաշրջանին համապատասխան՝ զբոսաշրջիկների ակտիվության հետ մեկտեղ նաև տաղավարներից մեկը տրամադրել ձեռագործ աշխատանքների ցուցադրությանը, ինչը հնարավություն կտա զբոսաշրջիկներին ծանոթանալ արվեստների ցուցանմուշների հետ՝ գորգարվեստին, ասեղնագործությանը, կերպարվեստին, տիկնիկագործությանը, ազգային զարդարանքներին, ազգային տարազներին և այլն: Սա իր հերթին կխթանի գյուղական բնակավայրերի բնակիչների աշխատանքների վաճառքին: Ծրագիրը կիրականացվի, ծրագրի պատասխանատուների՝ համայքապետարանի համապասխան մասնագետների միջոցով, իսկ կառավարումն ու տեխնիկական սպասարկումը կիրականացվի համայնքային հիմնարկի կողմից: Շահառուներ կհանդիսանան գյուղացիական տնտեսությունները և շուկայից օգտվող բնակիչները և զբոսաշրջիկները: Շուկայի կառավարման մեխանիզմի, աշխատանքների պլանավորման գործում իրենց դերակատարումը կունենան համայնքի ավագանին և բնակիչները: Ծրագրի իրականացման ընթացքում էկոլոգիական վնաս չի պատճառվի քանզի տաղավարները կկառուցվեն բնական փայտից: Ծրագիրը իրականացնելու համար ռիսկեր չկան, իսկ առաջանալու դեպքում կլուծվի համայնքապետարանի կողմից: Ծրագրը շահելու դեպքում կկնքվի համապատասխան պայմանագիր, ինչպես նաև իրականացման ընթացքում համայնքապետարանի և ԳՄՀԸ -ի փորձագիտական թիմի կողմից կիրականացվի մոնիտորինգ:
5. Փայտի մշակման գործընթացի մասնակիցներ	Համայքնի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան Համայնքի ղեկավարի խորհրդական՝ Նոնա Գրիգորյան Ֆինանսական բաժնի պետի ժ/պ Արմինե Աղաջանյան

6. Ծրագրի նպատակը և խնդիրները	**Ծրագրի նպատակն է Դիլիջանում համայնքային շուկայի ստեղծմամբ նպաստել տեղական գյուղմթերքների արտադրությանը, ինչպես նաև առևտրի զարգացման միջոցով խթանել բնակչության եկամուտների աճը:** **Ծրագրի խնդիրներն են** 1. Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մրցույթի կազմակերպում և ծախսերի գնահատում:/ տևողությունը 1 ամիս/ 2. Տաղավարների և ծածկի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայն /տևողությունը՝ մոտ 3 ամիս/: 3. Շուկայի կառավարման համակարգի մշակում և իրագործում /տևողությունը մոտ 1 ամիս,/: Ծրագրի խնդիրների իրականացման ամբողջ գործընթացը կլուսաբանվի համայնքապետարանի պաշտոնական և ֆեյսբուքյան կայքերում: Անհրաժեշտության դեպքում կկազմակերպվեն հանրային քննարկումներ, որոնց արդյունքները կներկայացվեն ավագանուն՝ որպես ուղենիշ: Իրենց մասնակցությունը կունենան թե՛ շուկայի ապագա ծառայություններից օգտվող բնակչությունը և թե՛ շուկայի ակտիվ շահառուները՝ գյուղմթերք արտադրողները:
7. Իրականացման ժամկետ	Հայտի հաստատման ֆինանսավորման տարվա ընթացքում տևողությունը 5 ամիս: Ծանոթություն. դրամաշնորհային հիմնադրամի ծրագրի ավարտը 15.12.2022թ.է:
8. Իրականացման վայրի հասցեն	Ք. Դիլիջան, 26 Կոմիսարների

Ակնկալվող արդյունքներ (այդ թվում՝ բնակչությունը համայնքի այլ ոլորտների դրա և միջանկյալ արդյունքներ, օր.՝ ամառանակավոր աշխատատեղեր ծրագրի իրականացման ընթացքում)	**Դիլիջան քաղաքում շուկայի ստեղծման արդյունքում համայնքը կունենա հետևյալ դրական փոփոխություններն ու արդյունքները.** • Գյուղմթերքների տեղական արտադրողները հնարավորություն կունենան առանց միջնորդի, անմիջականորեն վաճառքի հանել սեփական արտադրանքը: Կխթանվի գյուղմթերքների, հատկապես՝պտուղ-բանջարեղենի տեղական արտադրությունը: • Շուկայական գնագոյացման պայմաններում սպառող բնակչությունը հնարավորություն կստանա օգտվելու շուկայի առաջնային արտադրողի ավելի էժան գներից, որը զգալիորեն կազդի համայնքի բնակչության սոցիալական վիճակի վրա • Քաղաքի այցելուները և զբոսաշրջիկները այստեղ կարող են ձեռք բերել նաև հուշանվերներ և տնայնագործական ապրանքներ **երկարաժամկետ կտրվածքում.** Մի կողմից արտադրող գյուղացիները հնարավորություն կստանան բարելավել իրենց տնտեսական վիճակը, իսկ մյուս կողմից էլ Դիլիջան քաղաքի բնակիչները և համայնքի բնակավայրերից եկող այցելուները, ինչպես նաև զբոսաշրջիկները հնարավորություն կստանան ձեռք բերել տեղական արտադրության գյուղմթերքներ, և հուշանվերներ: Շուկայի կառուցումը կխթանի առևտուրը Դիլիջան համայնքում, կունենանք լրացուցիչ աշխատատեղեր, համայնքային բյուջեն կունենա լրացուցիչ սեփական եկամուտներ: Այսպիսով ծրագրի ուղղակի շահառուներ կհանդիսանան. • արտադրող գյուղացիական տնտեսությունները **200** • համայնքի բնակիչները, որոնց համար տեղական գյուղմթերքների ձեռք բերման հնարավորությունները կբարձրանան: • Զբոսաշրջիկները, որոնք հնարավորություն կունենան օգտվել տեղական մթերքներից անմիջապես գնելով արտադրողից : Շուկայի վարձավճարների մոտավոր հաշվարկը. Նախնական 1 տաղավարներ՝ ամսական միջինը՝ 10000 դրամ. միայն սպասարկման վճար, հետագայում տաղավարներ՝ ամսական միջինը՝ 30 000 դրամ վարձավճարով, որը տարվա կտրվածքով կաշխատի 8 ամիս և կբերի **240 000 դրամ եկամուտ ակնկալում ենք ունենալ 15 տաղավար** Այսպիսով՝ շուկայի համախառն հասույթը կլինի տարեկան՝մոտ **3 600 000 մլն. ՀՀ դրամ,** ինչը հիմանականում կուղղվի շուկայի պահպանմանը և կառավարմանը:

).Պատասխանատուներ *այդ թվում՝ համայնքապետարանից ուրս)*	Դիլիջանի համայնքապետարան
. Հայտատու համայնք(ներ)ի ՏԱՊ-(ներ)ի եւ բյուջեի համապատասխան տողվածը, որտեղ նախատեսված է ներկայացվող ծրագիրը	2022թ.-ին ներկայացվող ծրագիրը կներառվի ՏԱՊ-ի մեջ, ինչպես նաև կարտացոլվի 2022 թ բյուջեում:
1. Ծրագրի ընդհանուր արժեքը	7.733.000 ՀՀ դրամ՝ 13566 եվրո 1 եվրո= 570 դրամ
1. Հայտավորվող ֆինանսական միջոցներ	6.109.000 ՀՀ դրամ՝ 10717 եվրո
1. Համաֆինանսավորման չափն ու ձևը	1.624.000 ՀՀ դրամ՝ 2849 եվրո 21 %
1. Այլ լրացուցիչ տեղեկություններ և նյութեր	Քանի որ Դիլիջանը համարվում է զբոսաշրջային քաղաք, հետևաբար տուրիստական սեզոնին զբոսաշրջիկներն ու հովեկները ևս կարող են օգտվել առաջարկվող մթերքներից, ինչն էլ կապահովի ավելի մեծ շահույթ:
Պահանջվող փաստաթղթեր	
1. Ավագանու նիստի արձանագրություն	Ավագանու նիստի արձանագրությունը կլինի ծրագիրը հաստատելուց հետո:

17. Համայնքի բյուջեից քաղվածք՝ ի վկայություն հայտավորվող ծրագրի համաֆինանսավորումը նախատեսված լինելու մասին	Ծրագրի համաֆինանսավորումը կարտացոլվի համայնքի 2022 թվականի բյուջեում:
18. Միջհամայնքային ծրագրի դեպքում, համագործակցության հաշագիր / համաձայնագիր	

Դիլիջան համայնքի ղեկավար՝ Դավիթ Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (0268)22585,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվականի N 049-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2022 թվականի բյուջեն՝

1/ եկամուտների գծով 1067888.0 հազար ՀՀ դրամ,

2/ ծախսերի գծով 1067888.0 հազար ՀՀ դրամ,

3/ դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ 0.0 հազար ՀՀ դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հավելված 1):
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հավելված 2):
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հավելված 3):
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ (հավելված 4):
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ (հավելված 5):
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հավելված 6):
8. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:
9. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

համա նքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերա անցել հաստատված ծավալի 20-%ը:

10. Սր ն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվա ց և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կող -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԻ ՍԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԱԼԻ ՍԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԱՎԱ ԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԲԱՀ ՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԲՈՂ ԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԳՈՒ ԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԳՐԻ ՀՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԹԱԼ ՐԱՋՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԵԼ ՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՐ ԻԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀՈՎ ՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՂԱՖ ԼՐՅԱՆ ԳՈՀԱՐ

ՄԱՐ ՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱ

ՍԱՀ ԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՍԱՆ ԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՐ ՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐ ՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ